

1846-ին մինչև 1851-ն հոկտեմբ.	582,684
1851-ին մինչև 1856-ն հոկտեմբ.	256,194
1841-ին մինչև 1846-ն հոկտեմբ.	1,170,508
1856-ին մինչև 1841-ն հոկտեմբ.	655,965

1841-ին մինչև 1846-ին աճման պես երբեք Գաղղիոյ ժողովուրդը չէր շատցած. 1851-ին մինչև 1856-ին պես ալ երբեք չէր նուազած. ասոր զխաւոր պատճառը գուցէ ոմանք արեւելեան պատերազմը կարծեն. մենք ալ այնպէս կը կարծեինք. բայց տնտեսագետք քաջ քննելէն յետոյ, այս բանիս մի միայն պատճառ բարուց ապակաւորութիւնը գտան, որ եւ դժբախտաբար օրէ օր աւելնալու վրայ է: Երանի բէ երբեւեկութեանց ու յարաբերութեանց շատնալովը՝ այս վնասակար ու ազգասպան ապականութիւնը մեր անմեղ Հայոց ժողովրդեան մէջ ալ չմտնէ:

ՉԱՐՄԱՆԱԼԻ ՎԱՐԳ.

ԽՆՏԷՓԱՆՏԱՆՍ ՊԵՆԺ ԸՍՈՒԱԾ ՕՐԱԳՐՈՅՆ մէջ կը կարդանք. « Բնութեան անսովոր երեւոյթ մըն է այս, որ մեծ ու պզտիկ ամենքը կը փափաքին տեսնել. 1851-ին Երեքովի մօտ Յորդանան գետին ձորոյն մէջ փոքրիկ վարդ մը գտնուած է: Ասոր չորցած կոկոնը ջրի մէջ դրուելուն պէս կը բացուի ու դնողին աչքին առջեւ չորս վայրկեանէն կը ծաղկի իբրեւ բէ նոր բացուած ըլլար: Գտնուելէն ի վեր վեց տարի է որ այս զարմանալի յատկութիւնը կը պահէ. այսինքն շուր տեսնելուն պէս կը բացուի եւ ջրէն ելլելուն պէս կը չորնայ: Բնապատմութեան բանգարանին մէջ տակաւին բնութեան այսպիսի զարմանալիք մը չէր տեսնուած: Հիմա ամենէն աւելի ջրաչափ մարմինն այս է:

ՖՐԱՆՍՈՒԱ ԱՐԱՍԿՈՅԻ ՅԱՆՐԱՉԱՓԸ.

Ֆրանսուա Արասկոյ, անուանի աստեղաբաշխը որ մօտերս մեռաւ, սենեկին մէջ գեղեցիկ ու ծանրագին ծանրաչափ մը ունէր:

Օր մը իր հինաւորաց սպասաւորը վրայի փոշին բօրվելու ժամանակ ինչպէս կը լլայ վար կը ձգէ ու կտոր կտոր կը ընէ:

Երբոր խեղճը սարսափած յուսահատած կը նայ ու ինչ ընելիքը չէր գիտեր.

« — Բան չկայ, հոգ մընէր, կանչեց Արասկոյ. միայն կարծեմ որ անձրեւ պիտի գայ, վասնզի ծանրաչափը ոչ երբեք այնչափ վար իջած տեսեր էի: »

ՀԱՅԿԻԹԸ ԹԱՐՄ ՊԱՀԵԼՈՒ ՀՆԱՐԲ.

Հաւկիթը երկար առէն քարմ պահելու պարզ գիւտ մը ունին Զինացիք, որ Եւրոպայի մէջ ալ հիմա շատ տեղ մտած է: Հաւկիթին արժան եղած ժամանակը շատ մը առ, մէկ մաս հասարակ աղ՝ ինը մաս ջրի հետ խառնէ, հաւկիթները մէջը ձգէ եւ քող մինչեւ որ ջրին տակն իջնան. այն առնէն հանէ զանոնք, սնտուկի մը մէջ դիր զոցէ եւ ուզած ժամանակը բաց: Լաւ կը լլայ բէ որ սնտուկին մէջ աւազ եւ կամ փայտի սղոցուք ըլլայ:

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.

Ռուսի Հայաստանին կամ բէ Կովկասեան գաւառաց մէջ 1854 տարին ծնած վախճանած ու պսակուած Հայոց թիւը այսպէս կը գտնենք Թիֆլիզու Տարեգրութեան մէջ.

Ծնած մանչ տղաք.	7,158	} 12,510
« աղջիկ «	5,352	
Մեռած մանչ «	4,567	} 8,274
« աղջիկ «	5,907	
Պսակ.	5,418	

Թիֆլիզ քաղաքին մէջ նոյն 1854 տարին մեթ ազգէն

Ծնած մանչ տղաք.	582	} 1,076
« աղջիկ «	494	
Մեռած մանչ «	540	} 659
« աղջիկ «	519	
Պսակ.	210	

Propriétaire-gérant : A. LACHAT.